

Հարցաթերթ
 Աշխարհագրություն առարկայի 2020թ. դպրոցական օլիմպիադայի
 հանրապետական փուլի
 /տևողությունը՝ 150 րոպե/
 (զնահատման քայլը՝ 0,25 միավոր)
 9-րդ դասարան

1. Տրված են 12 ազգեր: Գրե՛ք ազգը, իսկ դիմացը

լեզվաընտանիքը և լեզվախումբը: -----3 միավոր

Կոմիներ, լատիշներ, քրդեր, կարակալպակներ, հունգարներ, արաբներ, տաջիկներ, չեչեններ,
 ֆիններ, բուրյաթներ, եթովպացիներ, ավարներ:

2. Տրվածներից առանձնացրե՛ք 4 քաղաք, որոնք ունեն միջերկրածովային կլիմա -----1 միավոր

Լիսաբոն, Պերտ, Բուենոս-Այրես, Օդեսա, Դաքար, Քեյփթաուն, Յաունդե, Լոս-Անջելես,
 Բանգկոկ, Պալերմո, Քեոնս, Ռեսիֆի:

3. Գրե՛ք այն երկրների համարները, որոնք առաջատար են ոչխարաբուծությամբ-----1 միավոր

- | | |
|-----------------|-------------|
| 1. Գերմանիա | 2. Իրան |
| 3. Կանադա | 4. Լեհաստան |
| 5. Նոր Զելանդիա | 6. Մոնղոլիա |
| 7. Արգենտինա | 8. Շվեդիա |

4. Երկրի բնակչության տեղաբաշխման վրա ազդող ի՞նչ գործոններ կարող են լինել:

Թվարկե՛ք գործոնները և բերե՛ք օրինակներ: -----2 միավոր

5. Ի՞նչ ընդհանրություն ունեն տրված երկրները (գրել ցանկացած 4 ընդհանրություն) -----1 միավոր

Սաուդյան Արաբիա, Քաթար, Քուվեյթ, Արաբական Միացյալ Էմիրություններ

6. Բուսատեսակների աճման շրջանները հաջորդաբար դասավորե՛ք արևելքից արևմուտք

ուղղությամբ: ----- 1 միավոր

- | | |
|------------|------------------------|
| 1. սեկվոյա | 2. փյունիկյան արմավենի |
| 3. բաոբաբ | 4. դաուրյան խեժափիճի |

7. Ի՞նչ կլիմեր, եթե երկրի երևակայական առանցքն իր ուղեծրի հարթության նկատմամբ թեքված

լիներ 90° անկյան տակ: Տարվա ի՞նչ եղանակ (ներ) կլիներ Երևանում, հասարակածում և՛
 բևեռներում: -----2 միավոր

8. Առանձնացրե՛ք Ատլանտյան օվկիանոսի ավազանին պատկանող գետերը -----1 միավոր

Պրուտ, Պո, Չերչիլ, Պեչորա, Չուրուն, Վոլգա, Յանա, Թերեք, Դալինգ, Հարավային Բուգ,
 Հյուսիսային Դվինա:

9. Գետի ջրի արագությունը (V) 80 սմ/վրկ է, կենդանի կտրվածքի մակերեսը (S)՝ 1,7 մ²: Հաշվել թե՛ գետով 1 օրում, ինչքա՞ն ջուր է անցնում (W): Պատասխանը ստացե՛ք հաշվարկով -----2 միավոր
10. Ո՞րքան պետք է լինի Հայաստանի Հանրապետության բնակչության թիվը, որպեսզի միջին խտությունը կազմի 170 մարդ/կմ² (պատասխանը հիմնավորե՛ք հաշվարկով) -----1 միավոր
11. Երկրի գետային տրանսպորտով տարեկան փոխադրվում է 8 մլն տոննա բեռ, իսկ բեռնաշրջանառությունը կազմում է 560 մլն տ․կմ: Ո՞րքան է տարեկան փոխադրվող բեռների հեռավորությունը (պատասխանը հիմնավորե՛ք հաշվարկով) -----1 միավոր
12. Աշխարհագրական ի՞նչ օբյեկտներ են նշվածները և ո՞րտեղ են գտնվում -----1 միավոր
ա) Էրեսուն, բ) Էրեբուս գ) Էլբուրս դ) Էլբրուս
13. Գրե՛ք Արևելյան Եփրատի հովտում գտնվող դաշտերի համարները -----1 միավոր
- | | |
|-----------------|---------------|
| 1. Կարնո | 2. Ճապաղջրի |
| 3. Մշո (Տարոնի) | 4. Երզնկայի |
| 5. Ալաշկերտի | 6. Բասենի |
| 7. Դերջանի | 8. Մանազկերտի |
14. Տրվածներից ընտրե՛ք 4 պետություն, որոնց բնակիչները պատկանում են հնդեվրոպական լեզվաընտանիքին, բայց հիմնականում դավանում են մահմեդականություն -----1 միավոր
Եմեն, Բոսնիա և Հերցեգովինա, Տաջիկստան, Լիբանան, Մակեդոնիա, Պակիստան, Չեռնոգորիա, Սյանմա, Բանգլադեշ, Ինդոնեզիա, Հորդանան, Սաուդյան Արաբիա:
15. Երկրագնդի ո՞ր կեսն է Երկրի կենտրոնին ավելի մոտ: Ի՞նչու (պատասխանը հիմնավորել)-----1 միավոր

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝



Ա.Թ.Գրիգորյան

Պատասխաններ

Աշխարհագրություն առարկայի 2020թ. դպրոցական օլիմպիադայի հանրապետական փուլի (գնահատման քայլը՝ 0,25 միավոր)

9-րդ դասարան

- | | |
|--|---|
| 1. Ժողովուրդ- լեզվաընտանիք-լեզվախումբ | Ժողովուրդ- լեզվաընտանիք-լեզվախումբ |
| Կոմիներ-ուրալյան-ուգրո-ֆիննական | Տաջիկներ-հնդեվրոպական-իրանական |
| Լատիշներ-հնդեվրոպական-բալթյան | Չեչեններ-կովկասյան-նախյան |
| Քրդեր-հնդեվրոպական-իրանական | Ֆիններ-ուրալյան-ուգրո-ֆիննական |
| Կարակալպակներ-ալթայան-թյուրքական | Բուրյաթներ-ալթայան-մոնղոլական |
| Հունգարներ-ուրալյան-ուգրո-ֆիննական | Եթովպացիներ-սեմաքամյան-քուշական |
| Արաբներ-սեմաքամյան-սեմական (սեմիթական) | Ավարներ-կովկասյան-դաղստանի |
- Պերտ, Քեյփթաուն, Լոս-Անջելես, Պալերմո:
- 2, 5, 6, 7:
- 1) բնական գործոններ: Օրինակ՝ ռելիեֆը, հողերը, օգտակար հանածոները, կլիման, ջրագրական ցանցը և այլն,
2) տնտեսական գործոններ: Օրինակ՝ տնտեսության զարգացման մակարդակը, ճյուղային կառուցվածքը, մասնագիտացման բնույթը, արտադրության և տրանսպորտային ցանցի տեղաբաշխումը և այլն,
3) պատմական գործոններ: Օրինակ՝ բնակեցման պատմական առանձնահատկությունները,
4) ժողովրդագրական գործոններ: Օրինակ՝ բնական աճը, միգրացիան:
- ա) արաբական երկրներ դ) ՆԱԵԿ-ի անդամ երկրներ
բ) միապետություններ ե) ունեն զարգացած նավթավերամշակություն
գ) նավթ արդյունահանող երկրներ զ) դավանում են հիմնականում իսլամի սուննի ուղղությունը և այլն:
- 4, 2, 3, 1:
- Եթե երկրի երևակայական առանցքն ուղղահայաց լիներ ուղեծրի հարթության նկատմամբ, ապա Արեգակի ճառագայթներն ամբողջ տարվա ընթացքում ուղղահայաց կընկնեին հասարակածի վրա: Հավասար լույս և ջերմություն կստանային երկու կիսագնդերը, գիշերը և ցերեկը միշտ կլինեին հավասար, բևեռային գիշերներ և ցերեկներ չէին լինի և ամեն մի գոտում կլինեին տարվա 1 եղանակ: Այսպես, հասարակածում միշտ կլինեին ամառ, Երևանում՝ աշուն կամ գարուն (անցողիկ), իսկ բևեռներում՝ միշտ ձմեռ:

8. Պրուտ, Պո, Չուրուն, Հարավային Բուգ:

9. Գետի ծախսը՝ $Q=S \cdot V=1,7 \text{ մ}^2 \times 0,8 \text{ մ/վ}=1,36 \text{ մ}^3/\text{վրկ}$

Գետի հոսքը 1 օրում՝ $W=Q \cdot T$

Օրվա վայրկյանների թիվը (T) կլինի՝ $60 \times 60 \times 24=86\,400 \text{ վրկ}$

$W=1,36 \text{ մ}^3/\text{վրկ} \times 86\,400 \text{ վրկ}=117\,504 \text{ մ}^3$:

10. $170 \text{ մարդ/կմ}^2 \times 29\,800 \text{ կմ}^2=5\,066\,000 \text{ մարդ}$:

11. $560 \text{ մլն} \cdot \text{տ} \cdot \text{կմ} : 8 \text{ մլն տ}=70 \text{ կմ}$:

12. Էրեւուն-Բալթիկ և Հյուսիսային ծովերը միացնող նեղուցներից մեկը,

Էրեբուն-գործող հրաբուխ Ռոսսի ծովում (կղզի Անտարկտիդայի ավերին),

Էլբուրս-լեռնաշղթա Հարավարևմտյան Ասիայում (Իրան),

Էլբրուս-լեռնագագաթ Մեծ Կովկասի լեռնաշղթայում:

13. 2, 3, 5, 8:

14. Բոսնիա և Հերցեգովինա, Տաջիկստան, Պակիստան, Բանգլադեշ:

15. Երկրի կենտրոնին ամենամոտ կետը հյուսիսային բևեռն է: Բևեռային շառավիղը 6357 կմ է, իսկ հասարակածայինը՝ 6378 կմ: Բացի դա, հյուսիսային բևեռի շուրջը ջրային ավազան է, իսկ հարավայինում՝ Անտարկտիդան, որն էլ ծածկված է հաստ սառցադաշտով: